ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

------- 2022 թվականի №-Ա
քաղ. Երևան

«ՀԻՊԵՐՍՊԵՅՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №494-Ն որոշման համաձայն (այսուհետ՝ Որոշում)՝ «ՀիպերՍպեյս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) մինչև սույն թվականի հուլիսի 30-ը Հանձնաժողով պետք է ներկայացներ նույն որոշման N2 հավելվածով հաստատված ձևին համապատասխան 2022 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն),

բ) Ընկերությունը 2022 թվականի 1-ին կիսամյակի արդյունքներով Հաշվետվությունը Հանձնաժողով է ներկայացրել սահմանված ժամկետից հետո՝ 2022 թվականի սեպտեմբերի 16-ին,

գ) Որոշմամբ սահմանված պահանջի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2022 թվականի սեպտեմբերի 6-ից Հանձնաժողովն Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 6-ի № ԳԲ/34.2-Մ2-7/3047-2022 գրությամբ,

դ) Ընկերությունը, հարուցված վարչական վարույթի շրջանակում, 2022 թվականի սեպտեմբերի 19-ի գրությամբ Հանձնաժողովին տեղեկացրել է, որ ինտերնետ հասանելիության ծառայություններ չի մատուցում և 2022 թվականի սեպտեմբերի 16-ի գրությամբ ներկայացրել է հաշվետվությունը՝ 2022 թվականի 1-ին կիսամյակի համար,

ե) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Հաշվետվության ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջը, սակայն

մինչև պատասխանատվության միջոց կիրառելու մասին Հանձնաժողովի որոշման ընդունումը վերացրել է թույլ տված խախտումը՝ Հանձնաժողով ներկայացնելով 2022 թվականի 1-ին կիսամյակի արդյունքներով Հաշվետվությունը, և խախտման հետևանքով չի վտանգվել և չէր կարող վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, դրանք ուղղակիորեն չեն հանգեցրել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, այլ կարգավորվող անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտման կամ լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, և առկա չէ խախտման կատարման կրկնակիություն, ինչպես նաև նախկինում նշված խախտումը Ընկերության կողմից թույլ չի տրվել, որի պարագայում, Հանձնաժողովի գնահատմամբ, հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել Ընկերության նկատմամբ Որոշմամբ սահմանված Հաշվետվության ներկայացման պահանջի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2022 թվականի սեպտեմբերի 6-ին հարուցված վարչական վարույթը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
--- -------ի 2022թ.